

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի
Նիստի*

Մասնակցում էին նիստի անդամները, շահառու հաշմանդամներ ունեցող հասարակական կազմակերպությունները.

Օրակարգում՝

2014 թվականի դեկտեմբերի 3-ին հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ

/Զեկ՝ Ծ.Գրիգորյան/

Ողջունելով ներկաներին տիկին Մուրադյանը ներկաներին տեղեկացրեց իր՝ նոյեմբերի 28-ին <<Մոսկվայի տանը>> տեղի ունեցած Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստին մասնակցության և քննարկված հարցերի մասին:

Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով>> (LIFE) ծրագրով 2012-2014թթ կատարված աշխատանքների մասին, քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանում կատարելու և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2014թ-ի նոյեմբերի 19-ի նիստով ընդունված որոշման, տեղեկատվություն հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների նկատմամբ իրականացված վերահսկողության, հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների համար նախատեսված ավտոկանգառների հարմարեցման /լայնացման/ մասին:

Քննարկվող հարցերի շուրջ հանդես գալով , տիկին Մուրադյանը նշեց, որ առաջարկել է նման խնդիրների շուտափույթ լուծումներ մարզերում ևս իրականացնելու համար:

Օրակարգի հարցի հետ կապված Ծ.Գրիգորյանի զեկույցից հետո, տիկին Մուրադյանը գոհունակություն հայտնեց շահագրգիռ հասարակական կազմակերպություններին, մարզային ԶԼՄ-ներին և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետներին՝ Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ մարզում իրականացված միջոցառումները գեղեցիկ կազմակերպելու համար, մաղթեց բոլորին հաջողություններ գալիք տարին լավ դիմավորելու ակնքալիքով:

Մարզպետի տեղակալ՝

Լ.Մուրադյան

Արձանագրող՝ Ծ.Գրիգորյան